

Եւ երազանքս անպատում  
Կը կոծկոծի՛, կ'արիւնի:

Հովը կ'ոռնայ խուլօրէն,  
Ու գիշերը կ'երկարի՛.  
Ալիքներու ժըխորէն  
Ու սարսափէն խաւարի:

Դալուկ սիրոյ մ'աշնային  
Կը կայթ դողն հոգւոյս մէջ,  
Ուր հուրիներ կը նային  
Անրջածին, լուսամէջ:

Բայց կը վախնամ որ նորէն  
Խուսափի՛ լոյսն երագին,  
Ու մըշուշներ գաղտօրէն  
Վայելքներուս շուրջ յածին: 1[1]

Աղաղակ մը, մէջն հոգւոյս,  
Արագօրէն կը ձայնէ  
Մահուան պարը սրտայոյզ,  
Մեռա՛ծ է կոյսը ձիւնէ:

Տարփատենչիկ, զաղփաղփուն 1[1],  
Աղջիկն է ան անուրջիս,  
1[1]Երագունակ ու փաղփուն  
Հոգին կանգնած է առջիս:

Ու կը տեսնեմ դեռ շողուն  
Փայլը սրտին իր նըսեմ.  
Մոգութենէն աչքերուն  
Յափշտակուած կ'երագեմ...

### 23. ՎԱՅՐԿԵԱՆՆԵՐ

Ո՛վ սիրական խաւարներ:  
Կենդանի՛ երագ դանդաղ գիշերներու,  
ուր կի՛րքը միայն նայուածքներ ունի: